ՅԳԻՉ ԻՑ ՅՅՏՈՓ

ICRC

ՀԱՅԱՍՏԱՆ

ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

ՀՈՒՆՎԱՐ-ԴԵԿՏԵՄԲԵՐ 2022

Կարմիր խաչի միջազգային կոմիտեն (ԿԽՄԿ) չեզոք, անկողմնակալ ու անկախ կազմակերպություն է, որը մարդասիրական պաշտպանություն և աջակցություն է տրամադրում զինված հակամարտությունից և բռնության այլ իրավիճակներից տուժած անձանց: 2022 թվականին լրացել է տարածաշրջանում ԿԽՄԿ ներկայության 30-ամյակը՝ Ղարաբաղյան հակամարտության առնչությամբ: 1992 թ.-ից ի վեր ԿԽՄԿ-ն մարդասիրական գործունեություն է ծավալում՝ աջակցելով հակամարտությունից տուժած անձանց, նպաստելով միջազգային մարդասիրական իրավունքի (ՄՄԻ) տարածմանն ու կիրարկմանը և հանդես գալով որպես չեզոք միջնորդ հակամարտության կողմերի միջև:

Երևանում ԿԽՄԿ պատվիրակության ու Իջևանում և Գորիսում ենթապատվիրակությունների միջոցով շարունակական աջակցություն ենք ցուցաբերում Ղարաբաղյան հակամարտության 2020 թ.-ի աշնան, 2021 թ.-ի և 2022 թ.-ի սեպտեմբերի սրացումների հետևանքով տուժած անձանց: Մեր ջանքերի և տարածաշրջանում մեր ներկայության շնորհիվ կարողացել ենք որպես չեզոք միջնորդ արձագանքել 2022 թ.-ի դեկտեմբերից ի վեր Լաչինի միջանցքի շուրջ իրավիճակի հետ կապված առաջնային հումանիտար կարիքներին: Շարունակել ենք իրագործել սահմանամերձ համայնքների դիմակայության ամրապնդման ծրագրեր: Սերտորեն համագործակցել ենք Հայկական Կարմիր խաչի ընկերության (ՀԿԽԸ) հետ ու աջակցել նրանց գործունեությանը, ինչպես նաև միավորել ենք մեր ջանքերը՝ արձագանքելու հակամարտության սրացումներից տուժած քաղաքացիական բնակչության կարիքներին:

Շարունակել ենք աջակցել նաև հակամարտության սրացումների հետևանքով անհայտ կորած անձանց ընտանիքներին, գրանցել ենք որոնման հարյուրավոր հայտեր և գնահատել 2020 թ.-ի աշնան սրացման հետևանքով անհայտ կորած անձանց ընտանիքներից շատերի կարիքները: Բացի այդ, Հայաստանի պատկան մարմիններին տրամադրել ենք տեխնիկական և նյութական, այդ թվում՝ դատաբժշկական փորձագիտական աջակցություն՝ նպաստելու աճյունների հետ արժանապատիվ վարվեցողությանը և հակամարտության կամ արտակարգ այլ իրավիճակների հետևանքով անհայտ կորած անձանց ճակատագրերի պարզմանը:

Շարունակել ենք այցելել 2020 և 2021 թթ.-ի հակամարտության սրացումների առնչությամբ ազատազրկված այն անձանց, որոնց ազատազրկման փաստը հաստատվել է համապատասխան իշխանությունների կողմից: Այցելությունների ընթացքում մշտադիտարկել ենք նրանց հանդեպ վերաբերմունքն ու ազատազրկման պայմանները, նպաստել ընտանիքների հետ կապի վերահաստատմանը: Իշխանությունների համաձայնությամբ՝ ազատազրկված անձանց կապն ընտանիքների հետ պահպանվել է Կարմիր խաչի նամակների, հեռախոսազանգերի, բանավոր և տեսաձայնագրված հաղորդագրությունների միջոցով: Դրանք շատ մեծ հուզական աջակցություն են ազատազրկվածների ու նրանց ընտանիքների համար, իսկ վերջիններիս դեպքում՝ հաճախ նաև միակ ապացույցը, որ իրենց հարազատը ողջ է:

30 years of humanitarian action ICRC in Armenia

Անհայտ կորած և ազատազրկված անձինք, աճյունների հետ վարվեցողություն

Ավելի քան 6000 զանգ և **այց** ենք ունեցել անհայտ կորած անձանց ընտանիքների կողմից Երևանի մեր գրասենյակում:
62 ընտանիք դիմել է ԿԽՄԿ-ին՝ իրենց անհայտ կորած հարազատների ճակատագիրը պարզելու խնդրանքով, և բացել որոնման հայտեր:
63 ընտանիք պարզել են իրենց հարազատների ճակատագրերը: **309 անձ** Հայաստանից դեռևս անհայտ կորած է համարվում հակամարտության 2020, 2021 թթ.-ի և 2022 թ. սեպտեմբերի սրացումների հետևանքով:

Հակամարտության 2020 թ.-ի սրացման հետևանքով **80 անհայտ կորած անձի ընտանիքի** այցելություն է կատարվել՝ ընտանիքների կարիքների գնահատման շրջանակներում:

6 տեղեկատվական հանդիպում է կազմակերպվել հակամարտության 2020 թ.-ի սրացման հետևանքով անհայտ կորած անձանց ընտանիքների հետ Արմավիրում մեկնարկած «Սատարում» ծրագրի շրջանակներում:

18 տեղեկատվական հանդիպում է կազմակերպվել 90-ականների հակամարտության հետևանքով **141 անհայտ կորած անձանց** ընտանիքների հետ՝ ԿԽՄԿ-ի գործունեության և տարածաշրջանում վերջին զարգացումների վերաբերյալ:

Ավելի քան **1550 բանավոր, տեսաձայնային և գրավոր Կարմիր խաչի հաղորդագրություններ** են փոխանցվել հակամարտության առնչությամբ ազատազրկվածների ընտանիքներին: ԿԽՄԿ-ն կանոնավոր կերպով այցելում է ազատազրկված անձանց՝ նպաստելով հարազատների հետ նրանց կապի հաստատմանը և պահպանմանը:

ԴՆԹ անջատման **19,** ԴՆԹ քանակական որոշման **մեկ** և հետմահու ու կենսաբանական նմուշներից ԴՆԹ կրկնահանման **երեք** հավաքածու է տրամադրվել Երևանի դատաբժշկական գիտագործնական կենտրոնին (ԴԲԳԿ):

Երևանի ԴՆԹ լաբորատորիային տրամադրվել է ԴՆԹ անջատումից առաջ ոսկրային նմուշների մշակման **երկու սարքավորում՝** կրիոգեն և A11 տեսակի մանրացման սարքեր:

ԴԲԳԿ-ին տրամադրվել են **պարագաներ** (նշտարներ, շեղբեր, դիապարկեր, գոգնոցներ), **գույք** (բժշկական պարագաների երեք դարակ, դիահերձման չորս սեղան, փաստաթղթերի 10 դարակաշար), **սարքավորումներ** (դիահերձման պարագաների ութ հավաքածու, կենսաբանական նմուշառման 300 հավաքածու) և **անհատական պաշտպանության 1000 միջոց՝** աճյունների հետ պատշաճ վարվեցողության համար:

1 դիասառնարան ու **ամբարձման հիդրավլիկ մեկ սայլակ** է տրամադրվել և տեղադրվել Եղեգնաձորի դիահերձարանում:

1 Կամազ բեռնատար է վերազինվել 12 աճյունների սառնարանային տեղափոխման համար և նվիրաբերվել ՀՀ արտակարգ իրավիճակների ծառայությանը:

2 խորհրդատվական այց է կատարվել ԿԽՄԿ գենետիկայի մասնագետների կողմից ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիա՝ ԴՆԹ թեստավորման և նմուշների համադրման գործընթացին փորձագիտական խորհրդատվությամբ և դասընթացներով աջակցելու նպատակով:

5 ԴԲԳԿ աշխատակից մասնակցել է ԴՆԹ թեստավորման վերաբերյալ դատաբժշկական 2-րդ առցանց գիտաժողովին, որը կազմակերպվել էր DNAforAfrica-ի և ԿԽՄԿ-ի կողմից:

2 ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայի գենետիկայի փորձագետ մասնակցել է ԴՆԹ-ի աջակցությամբ անհայտ կորած անձանց և աղետների զոհերի նույնականացմանը նվիրված ԿԽՄԿ առաջին միջազգային գիտատաժողովին Թբիլիսիում:

5 ԴԲԳԿ ԴՆԹ լաբորատորիայի գենետիկայի փորձագետ մասնակցել է Quantstudio5 ՊՇՌ հավաքածուի միջոցով իրական ժամանակում ԴՆԹ քանակական հայտնաբերման վերաբերյալ առցանց դասընթացի:

1 կլոր սեղան-քննարկում՝ «Հայաստանում բժշկահիրավական քննչական համակարգի ամրապնդման» թեմայով, կազմակերպվել է որոշումներ կայացնողների համար՝ աճյունների հետ վարվեցողության և նույնականացման ու անհայտ կորածների որոնման շեշտադրմամբ:

1 ուսումնական այց Կիպրոս կազմակերպվել է պետական բարձրաստիճան պաշտոնյաների համար՝ անհայտ կորած անձանց հարցերով զբաղվող հանձնաժողովի աշխատանքներին ծանոթանալու նպատակով:

Հոգեկան առողջություն և հոգեսոցիալական աջակցություն (ՀԱՀՍԱ)

405 անձ Սյունիքի, Գեղարքունիքի և Տավուշի սահմանամերձ համայնքներից մասնակցել է ՀԱՀՍԱ վերաբերյալ **տեղեկատվական հանդիպումների,** որոնք կազմակերպվել են ՀԿԽԸ հոգեբանների և խորհրդատուների կողմից՝ ԿԽՄԿ-ի հետ սերտ համագործակցությամբ:

621 անձ սահմանամերձ համայնքներից մասնակցել է ՀԿԽԸ վերապատրաստված խորհրդատուների կողմից կազմակերպված հոգեբանական աջակցության/ կրթության վերաբերյալ խմբային ու անհատական դասընթացների:

26 ՀԱՀՍԱ մասնագետ և **համայնքի ներկայացուցիչ** վերապատրաստվել են ՀԿԽԸ-ի կողմից՝ սեփական համայնքներում տարրական հոգեբանական աջակցություն ցուցաբերելու նպատակով:

537 անհատական և **135 խմբային ՀԱՀՍԱ հանդիպում** է կազմակերպվել Տավուշի, Գեղարքունիքի և Սյունիքի մարզերում հոգեբանների և խորհրդատուների կողմից:

24 անհայտ կորածների ընտանիքների անդամ հոգեբանական աջակցություն է ստացել տնայցերի կամ աջակցության խմբերի միջոցով:

31 ՀԱՀՍԱ մասնագետ պետական և մասնավոր հատվածից մասնակցել է ԿԽՄԿ և Շվեդական Կարմիր խաչի կողմից կազմակերպված ՀԱՀՍԱ վերաբերյալ եռօրյա դասընթացի:

24 հոգեբան Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնից հզորացրել է ռազմական գործողությունների ականատես երեխաների հետ աշխատելու իրենց կարողությունները՝ ԿԽՄԿ-ի կազմակերպած վերապատրաստման դասընթացի շնորհիվ:

Առողջապահություն

3 անհետաձգելի բուժօգնության բաժանմունք է վերանորոգվել և կահավորվել Վայքի հիվանդանոցում, Ջերմուկի առողջության կենտրոնում և Խաչիկ գյուղի բուժկետում:

25 մենեջեր Վայոց Ձորի, Սյունիքի և Գեղարքունիքի **վեց հիվանդանոցից** և **մեկ առողջապահական կենտրոնից** վերապատրաստվել են տուժածների զանգվածային հոսքի կառավարման թեմայով: Այդ **յոթ** բուժհաստատությունները ստացել են նաև պահուստային պարագաների հավաքածուներ՝ զանգվածային տուժածների դեպքում անհետաձգելի բուժօգնությունը կազմակերպելու համար:

15 առաջնային բուժօգնության հաստատություն Վայոց Ձորում, Սյունիքում և Գեղարքունիքում վիրակապական պարագաներ են ստացել տուժածների առաջին բուժօգնություն ցուցաբերելու համար:

1 ստացիոնար ցենտրիֆուգ, արյան մեկ վերլուծիչ և **այլ պարագաներ** են տրամադրվել Գորիսի արյան փոխներարկման կայանի լաբորատորիային՝ հզորացնելու հաստատության կարողությունները:

1054 անձ 89 համայնքներում, այդ թվում՝ փրկարարներ, առողջապահության ոլորտի մասնագետներ և ուսուցիչներ, վերապատրաստվել են առաջին օգնության հիմունքների թեմայով՝ ՀԿԽԸ առաջին օգնության բաժնի կողմից և ԿԽՄԿ աջակցությամբ:

4 դասընթացավար անհետաձգելի ու աղետների բժշկության ուսումնական կենտրոնից մասնակցել են Բոստոնի «Բեթ Իսրայել սարկավագի» ԲԿ կողմից կազմակերպված չորսշաբաթյա դասընթացի:

7 ազգային դասավանդողներ վերապատրաստվել են որպես ԱՀԿ-ԿԽՄԿ «Անհետաձգելի բուժօգնության հիմունքները» դասընթացի հրահանգիչներ:

Տնտեսական աջակցություն

Արտակարգ իրավիճակներին արձագանք/աջակցություն

450 տնային տնտեսության ՀԿԽԸ-ն բաժանել է սննդի և հիգիենայի պարագաների փաթեթներ Սյունիքի 9 սահմանամերձ գյուղերում:

4,754 անձ՝ տեղահանված հակամարտության 2020 թ. սրացման հետևանքով, դրամական աջակցություն է ստացել ԿԽՄԿ-ից՝ ՀԿԽԸ-ի ու ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության հետ համագործակցությամբ:

111 ընտանիք՝ Լաչինի միջանցքի երկայնքով տեղակայված երեք համայնքներից, ՀԿԽԸ-ի միջոցով ստացել է դրամական աջակցություն:

2500 պարենի և **2500 հիգիենայի պարագաների փաթեթներ** են տրամադրվել ՀԿԽԸ-ին, որը դրանք բաշխել է 2022թ. սեպտեմբերի սրացումից հետո՝ հոգալով տուժած համայնքների անմիջական կարիքները:

1580 անձ ստացել է դրամական աջակցություն՝ սեպտեմբերի սրացումից հետո Սյունիքի և Գեղարքունիքի ամենից տուժած **ութ համայնքներում՝** ՀԿԽԸ-ի միջոցով:

40 տնային տնտեսություն Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի սահմանամերձ համայնքներում բարելավել է բնակարանային պայմանները «Ֆուլեր տնաշինական կենտրոն Հայաստանի» հետ համատեղ տրամադրած անտոկոս վարկերի միջոցով:

Հակամարտության 2020 թ.-ի սրացման հետևանքով անհայտ կորածների, նախկին և ներկա ազատազրկվածների **29 ընտանիքի** տրամադրվել է դրամական օգնություն՝ հրատապ կարիքները հոգալու համար, իսկ **19 ընտանիք** ստացել է դրամաշնորհ՝ եկամտի աղբյուր ստեղծելու համար:

Համայնքների դիմակայության աջակցության ծրագրեր

170 տոննա էլիտար սերմացու է բաժանվել Սյունիքի **յոթ համայնքների** (Բարձրավան, Կաղնուտ, Դավիթ Բեկ, Ագարակ, Խդրանց, Կաղնուտ, Ուժանիս) **208** և Գեղարքունիքի **չորս համայնքների** (Կութ, Ազատ, Նորաբակ, Վերին Շորժա) **78 տնային տնտեսությունների՝** նպատակ ունենալով բարձր բերքատվությամբ սերմերի միջոցով ապահովել բազմամյա վերարտադրություն և ֆերմերների կենսամիջոցների կայուն բարելավում:

70 հա հող է մելիորացվել Սյունիքի Շիկահող, Ուժանիս և Կաղնուտ համայնքներում, ողջ մարզին տրամադրվել է անասնակերի սերմացու, **սերմնացան** և **դիզելային վառելիք՝** հողի մշակման և 2020 թ. սրացման հետևանքով անասնակերի պակասի խնդրի մասնակի լուծման համար:

20 տնային տնտեսություն Սյունիքի Արավուս, Շուռնուխ և Կաղնուտ համայնքներում դրամաշնորհ է ստացել՝ վերականգնելու հակամարտությունից հետո եկամտի աղբյուրը կամ ստեղծելու նորը:

2 եռակցման սարք ու անհրաժեշտ կցամասեր են նվիրաբերվել Սյունիքի Տեղ և Որոտան համայնքներին՝ այլ դերակատարների կողմից սկսած ոռոգման համակարգի վերակառուցման աշխատանքներն ավարտին հասցնելու համար: **270 տնտեսություն** կունենա սեզոնային ոռոգում և էապես կավելացնի հողի արտադրողականությունը:

18 դիտահոր է վերանորոգվել և ևս **մեկը՝** կառուցվել Սյունիքի Եղվարդ համայնքում՝ ջրային համակարգի և խմելու ջրի մատակարարման բարելավման նպատակով:

69 տնային տնտեսություն սահմանամերձ Շիշկերտ, Ծավ, Ներքին Հանդ, Սրաշեն, Շիկահող, Ճակատեն, Եղվարդ, Ագարակ, Խդրանց, Կաղնուտ և Դավիթ Բեկ համայնքներում ստացել են գյուղտեխնիկայի պահեստամասեր՝ **289 անվադող** և **երեք մարտկոց**:

Գորիսի **Կանանց զարգացման կենտրոնը** և Ներքին Խնձորեսկի **Տարոն երիտասարդական զարգացման ՀԿ-ն** ստացել են ֆինանսական աջակցություն՝ իրենց համայնքներում հիդրոպոնիկ ծրագրեր սկսելու համար:

1 կոմբայն է նվիրաբերվել Խնածախ համայնքին, **մեկ տրակտոր,** երկու խոտհնձիչ, փոցխ, խոտհար, սկավառակային ցաքան և գութան՝ Կապան խոշորացված համայնքին, **սերմերի մաքրման** և մշակման սարքավորում՝ Տեղ խոշորացված համայնքին:

60 բնակիչ Տավուշի Այգեպար գյուղից մասնակցել է բանջարեղենի և պտղատու ծառերի մշակության դասընթացի՝ մոտ 50 հողակտոր մատակարարող 1500-մետրանոց ոռոգման ջրատարի մաքրումից հետո: **29 փոքր արտադրող** Այգեպար գյուղից ստացել է դրամական աջակցություն՝ գյուղատնտեսական պարագաներ՝ սերմացու, պարարտանյութեր և գործիքներ ձեռք բերելու նպատակով:

55 բնակիչ Տավուշի Չինարի համայնքից մասնակցել է կանաչ գյուղատնտեսությանն ուղղված դասընթացի՝ հզորացնելու պտղատու ծառերի մշակության իրենց կարողությունները:

3 գործող և **մեկ նոր հիմնադրվող** միրգ մթերող ընկերության տրամադրվել են չորանոց, սառնարան (32 քռ. մ) ու անհրաժեշտ այլ սարքավորումներ՝ բարձրացնելու արտադրանքի որակը և եկամուտը:

132 բնակիչ Գեղարքունիքի Ազատ, Կութ և Նորաբակ համայնքներում ու **երեք տեղացի փորձագետ** մասնակցել են մեղվաբուծության դասընթացի՝ մշակելու եկամտի նոր աղբյուրների ստեղծման մարտավարություն և հզորացնելու առկա կարողությունները: **Երեք մեղրաքամիչ,** փայտի սղոց, սերեկի էլեկտրական դանակ և մեղրամոմի հալեցման սարք է նվիրաբերվել նշված գյուղերի երեք փորձագետներին:

Բնակավայրերի ջրամատակարարում

4 սահմանամերձ դպրոցում Տավուշի (մեկ դպրոց) և Գեղարքունիքի (երեք դպրոց) մարզերում բարելավվել են խմելու ջրի հասանելիությունը և սանիտարահիգիենիկ պայմանները.

- **6 սանհանգույցներ** են վերանորոգվել Գեղարքունիքի Վարդենիս, Արտանիշ և Ծափաթաղ համայնքների դպրոցներում,
- **2 սանհանգույցներ** են վերանորոգվել Տավուշի Ոսկեվան համայնքի դպրոցում:

1 ապահով սենյակ մինչև 120 անձի համար վերանորոգվել և կահավորվել է Գեղարքունիքի Մեծ Մասրիկ գյուղում՝ «Ջինիշյան» հիշատակի հիմնադրամի և համայնքի ղեկավարության հետ համատեղ:

2 ջրհավաք բաք և խմելու ջրի ավազանին հարող **սանիտարական գոտի** է վերանորոգվել Մեծ Մասրիկ գյուղում՝ տեղի բնակչության համար ջրի հասանելությունը բարելավելու նպատակով:

Միջազգային մարդասիրական իրավունքի խթանում

13 ներկայացուցիչ ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից և **երեք աշխատակից** Միջազգային իրավական հարցերով ներկայացուցչի գրասենյակից մասնակցել է Զինված ընդհարման և հետհակամարտային իրավիճակներում ՄՄԻ և մարդու իրավունքների վերաբերյալ դասընթացի, որը կազմակերպվել էր Եվրոպայի խորհրդի երևանյան գրասենյակի հետ համագործակցությամբ:

3 թեմատիկ դասընթաց է կազմակերպվել հայ ուսանողների և դասախոսների համար ՄՄԻ դասավանդման և խթանման, ինչպես նաև մշակութային ցեղասպանության վերաբերյալ:

24 ուսանող Հայաստանի յոթ համալսարաններից մասնակցել է ՄՄԻ վերաբերյալ 2022 թ.-ի ԿԽՄԿ-ի ազգային դատախաղ-մրցույթին:

3 ուսանողից բաղկացած ԵՊՀ թիմը ԿԽՄԿ աջակցությամբ մասնակցել է Ժան-Պիկտեի անվան 37-րդ մրցույթին Ալբանիայում:

3 ուսանողից բաղկացած՝ Հայ-ռուսական համալսարանի թիմը մասնակցել է Մոսկվայում ԿԽՄԿ տարածաշրջանային պատվիրակության կողմից կազմակերպված ՄՄԻ վերաբերյալ 2022 թ. Մարտենսի անվան դատախաղ-մրցույթին, դուրս եկել եզրափակիչ և գրավել երկրորդ տեղը:

42 ներկայացուցիչ ութ երկրների 13 համալսարանից, պետական ատյաններից, ՀԿ-ներից և միջազգային կազմակերպություններից մասնակցել են Հայաստանում ԿԽՄԿ պատվիրակության և Հայաստանի ամերիկյան համալսարանի կողմից համատեղ կազմակերպված ՄՄԻ վերաբերյալ տարածաշրջանային ամառային դպրոցին:

52 սպա Ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերից իրազեկվել է ԿԽՄԿ հանձնագրի, գործունեության և ՄՄԻ հիմունքների վերաբերյալ Կապանում, Բագրատաշենում, Ստեփանավանում և Երևանում կազմակերպված դասընթացների շրջանակներում՝ ԿԽՄԿ-ի և ՀՀ ԱԱԾ ՍԶ-ի միջև կնքված համատեղ գործողությունների պլանի համաձայն:

36 սպա, ենթասպա և սերժանտ արտակարգ իրավիճակների նախարարությունից իրազեկվել է ԿԽՄԿ հանձնագրի, գործունեության և ՄՄԻ հիմունքների վերաբերյալ Գյումրիում և Գավառում կազմակերպված երկու դասընթացի շրջանակներում:

10 սպա ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերից իրազեկվել է ԿԽՄԿ հանձնագրի, գործունեության և ՄՄԻ հիմունքների վերաբերյալ Կապանում կազմակերպված ԿԽՄԿ դասընթացի շրջանակներում:

12 ԶԼՄ ներկայացուցիչ մասնակցել է ԿԽՄԿ-ի գործունեության և հումանիտար խնդիրների լուսաբանման վերաբերյալ դասընթացի և սահմանամերձ համայնքներում լրագրողական շրջայցի, որը ներառել է ՄՄԻ էության, հակամարտային իրավիճակներում լրագրողների պաշտպանության և կարգավիճակի վերաբերյալ ուսումնական մաս:

1 լրագրող ստացել է ԿԽՄԿ մրցանակ՝ ռազմական գործողությունների ժամանակ հումանիտար խնդիրները լուսաբանող լավագույն ռեպորտաժի համար՝ Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի կողմից կազմակերպված ամենամյա «Թվապատում» մրցույթի շրջանակներում:

Կրթության հասանելիություն

1 կլոր սեղան-քննարկում է կազմակերպվել ՀՀ ԿԳՄՍ նախարարության հետ՝ Հայաստանի սահմանամերձ դպրոցներում կրթության հասանելիության խնդիրների վերաբերյալ: Սահմանամերձ համայնքների **49 դպրոցում** կարիքների գնահատման ԿԽՄԿ **համապարփակ զեկույցը** տրամադրվել է ԿԳՄՍ-ին՝ որոշարկված կարիքներին ավելի համակարգված արձագանքելու նպատակով:

371 աշակերտ յոթ սահմանամերձ դպրոցից (Փամբակ, Ջիլ, Դավիթ Բեկ, Ներքին Հանդ, Բարձրունի և Երասխ գյուղեր), որտեղ ուսուցիչների պակաս կա, ստացել է SS սարքեր, այդ թվում՝ համակարգիչներ և նոթբուկներ, պրոյեկտոր և բարձրախոս՝ հեռավար ուսուցման կազմակերպման համար:

23 դպրոց Գեղարքունիքի և Տավուշի սահմանամերձ համայնքներում ստացել է ախտահանման և հիգիենայի պարագաներ, այդ թվում հեղուկ օճառ, ալկոգել ու ախտահանող լուծույթ:

410 աշակերտ օգտվել է Սյունիքի Գեղանուշ, Ծավ և Գեղարքունիքի Գեղամասար, Փամբակ, Ծափաթաղ և Գետիկ համայնքների դպրոցներին անհրաժեշտ դպրոցական կահույքի նվիրատվությունից:

5 դպրոց Տավուշի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի սահմանամերձ համայնքներում բարելավվել է ուսումնական ֆիզիկական միջավայրը դասարանների վերանորոգման, նոր պատուհանների և ջեռուցման համակարգի տեղադրման միջոցով:

25 դպրոց սահմանամերձ համայնքներում կահավորվել է հակահրդեհային սարքերով, ահազանգման համակարգով և արտակարգ իրավիճակներին պատրաստության այլ պարագաներով՝ ՀԿԽԸ-ի հետ համատեղ իրականացվող ծրագրի շրջանակում: Ուսուցիչներն ու վարչական անձնակազմը մասնակցել է արտակարգ իրավիճակներում անվտանգ տարհանման վարժանքների:

260 աշակերտ յոթ սահմանամերձ դպրոցից, որտեղ ԿԽՄԿ-ն բարելավել է սանիտարահիգիենիկ պայմանները, մասնակցել են ՀԿԽԸ-ի հետ համատեղ կազմակերպված հիգիենայի կանոնները խթանող նախագծի:

24 հոգեբան ՀՄՀԿ-ից հզորացրել են ռազմական գործողություններ վերապրած երեխաների հետ աշխատելու իրենց կարողությունները:

Զինամթերքով աղտոտված տարածքների անվտանգություն

Ավելի քան **6970 քաղաքացիական անձ**՝ զինամթերքով աղտոտված կամ նման տարածքին հարակից **46 սահմանամերձ համայնքներից**, մասնակցել է ականների և պատերազմի պայթուցիկ մնացորդների վերաբերյալ իրազեկման հանդիպումների դպրոցներում և համայնքապետարաններում, որոնք կազմակերպվել են ՀԿԽԸ կողմից՝ ԿԽՄԿ աջակցությամբ:

18 դպրոց թատերական ներկայացումներ է բեմադրել կրակոցների և հրետակոծությունների ժամանակ անվտանգ վարքագծի վերաբերյալ՝ 10-18 տարեկան **1694 աշակերտի**, ինչպես նաև ՀԿԽԸ և ԿԽՄԿ ներկայացուցիչների մասնակցությամբ:

38 սահմանամերձ համայնքում ականների և ՊՊՄ վերաբերյալ անվտանգ վարքագծի թեմայով տիկնիկային ներկայացումներ են բեմադրվել 5-10 տարեկան **2406 երեխայի** համար ՀԿԽԸ կամավորների կողմից՝ ԿԽՄԿ աջակցությամբ:

Համագործակցություն Հայկական Կարմիր խաչի ընկերության հետ*

2 մարզային այցելություն է կատարվել դեպի Լոռու Մեծ Պարնի և Կոտայքի Գառնի համայնքներ՝ մասնակցելու վերջերս կազմավորված հրշեջ-փրկարարական կամավոր ջոկատների **երկու վարժանքի,** որոնք կազմակերպվել էին ՀԿԽԸ, Ավստրիական Կարմիր խաչի ընկերության և ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության կողմից:

570 երեխա շարունակել է հաճախել ՀԿԽԸ կամավորների կողմից իրականացվող հոգեսոցիալական և արտադասարանական ուսումնական պարապմունքների Երևան, Մասիս, Մեծամոր, Ծաղկաձոր և Հրազդան քաղաքների **հինգ կոլեկտիվ կենտրոնների** Ժպիտի ակումբներում, որոնք հյուրընկալել են տեղահանված երեխաներին և Վարդենիս, Մեծ Մասրիկ, Տեղ, Սյունիք և Գեղանուշ սահմանամերձ համայնքների **հինգ դպրոցներում**:

24 համայնքային նախագիծ է մշակվել և իրականացվել «Ժպիտի ակումբների» սաների կողմից Մարդկային արժեքների խթանման նախաձեռնության շրջանակներում:

20 կամավոր ՀԿԽԸ մասնաճյուղերի կրթական ծրագրերից մասնակցել է «Կրթությունը արտակարգ իրավիճակներում» թեմայով դասընթացի՝ որպես կրթության ԿԽԿՄ շարժման մոտեցման փորձնական և տեղայնացման գործընթացի մաս:

Աղետներին արձագանքման ՀԿԽԸ **ևս 2 թիմ** է կազմավորվել և վերապատրաստվել ԿԽՄԿ-ի աջակցությամբ Արարատի և Սյունիքի մարզերում՝ գործող թիմերի ընդհանուր թիվը հասցնելով յոթի:

19 աշխատակից ՀԿԽԸ գլխամասային գրասենյակից և մարզային մասնաճյուղերից զարգացրել են իրենց հմտությունները տնտեսական անվտանգության գնահատման հարցում ԿԽՄԿ-ի կողմից կազմակերպված դասընթացի միջոցով:

2 ՀԿԽԸ աշխատակից մասնակցել է գյուղատնտեսական արժեքային շղթայի զարգացման խորացված դասընթացի՝ ստացված գիտելիքները համապատասխան նախագծերում կիրառելու նպատակով:

30 ՀԿԽԸ կամավոր և **երեք աշխատակից** մասնակցել է 46 սահմանամերձ համայնքներում ականների և ՊՊՄ ռիսկերի ու անվտանգ վարքագծի վերաբերյալ իրազեկման համատեղ նախագծերի իրականացմանը:

*ՀԿԽԸ-ի հետ համագործակցությամբ իրականացված այլ գործունեությանը ծանոթանալու համար տե՛ս տեղեկագրի մյուս բաժինները:

Մենք աջակցում ենք զինված հակամարտությունից և բռնության այլ իրավիճակներից տուժած մարդկանց ամբողջ աշխարհում՝ անելով հնարավորինը նրանց կյանքն ու արժանապատվությունը պաշտպանելու և տառապանքը մեղմելու համար, հաճախ՝ Կարմիր խաչի և Կարմիր մահիկի մեր գործընկերների հետ համագործակցությամբ: Մենք նաև ձգտում ենք պաշտպանել մարդկանց զրկանքներից՝ մարդասիրական իրավունքը խթանելու և ամրապնդելու, ինչպես նաև համամարդկային մարդասիրական սկզբունքները պահպանելու միջոցով:

Կարմիր խաչի միջազգային կոմիտեի պատվիրակություն
Հայաստանում
73/3 Նախիրի Զարյան փ.
0014 Երևան, Հայաստան
Հեռ.՝ +374 297415, erevan@icrc.org
Գլխավոր նկարը՝ Քնարիկ Սերոբյանի/ԿԽՄԿ
© ԿԽՄԿ, մարտ 2023 թ.

facebook.com/icrcAm
twitter.com/ICRC_am
instagram.com/icrc

1631.002 02.2023 300